

### ԱՆԻՐԱՎ ԴԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻԻ ԽՈՐՀՈՒՐԴՆ ԸՍՏ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ

*«Մի քաղաքում մի դատավոր կար, Աստծուց չէր  
վախենում և մարդկանցից չէր ամաչում...»:  
(Ղուկ. ԺԸ 2)*

Մեծի Պահոց շրջանի հիմնգերորդ կիրակին նվիրված է Ամիրավ դատավորի առակին: Հայ Եկեղեցու հայրերի կողմից կատարված այս ընտրությունը պատահական չէ, քանի որ այս առակի խորհուրդը համապատասխան աղոթելն է, որը և ընկած է պահքի հիմքում:

Ամիրավ դատավորի առակին անդրադարձել են եկեղեցական շատ հայրեր, կատարվել են տարբեր մեկնություններ, այդ թվում և Ս. Գրիգոր Տաթևացու կողմից: Հաշվի առնելով վերջինիս մեկնության յուրահատկությունները՝ ներկայացնում ենք մեր Եկեղեցու եռամեծ այս վարդապետի հիմնական այն ըմբռումներն ու մտածումները, որոնք վերաբերում են այս առակի խորհրդի վերհամմանը<sup>1</sup>:

Առակի մեկնությանն անդրադառնալուց առաջ Տաթևացին նախ բերում է առկա մի քանի տեսակետներ, որոնք ներկայացնում ենք ստորև:

Ծատերն առակում հայտնի դատավորին համեմատում են Աստծո հետ, քանի որ Նա է բոլորի իշխանն ու Դատավորը, իսկ քաղաքը, ըստ մուլն բնորոշման, այն աշխարհն է, ուր մենք ապրում ենք: Սակայն առակի շարունակության մեջ տեսնում ենք, որ Քրիստոս իր իսկ պատմած առակում դատավորին անիրավ է կոչում, ինչը, բնականաբար, բնավ չի պատշաճում Աստծուն, Ով արդար Դատավորն է:

Ոմանք էլ այն կարծիքին են, թե Քրիստոս առակում հրեշտակներին է իշխան և վերակացու անվանում՝ մարդկանց վրա կարգված, սակայն հրեշտակներն անմարմին էակներ են, որոնք ուղարկվում են մարդկանց սպասավորելու և պահպանելու համար:

Այս առակի խոսքերն առավելաբար տարածվում են մարդկանց վրա, որովհետև մարդն ինքնին կենդանի քաղաք է՝ Աստծուց շինված, համաձայն Պողոս առաքյալի հետևյալ խոսքի. «Դուք կենդանի Աստծո տաճար եք» (հմմտ. Ա. Կորնթ. Գ. 16)<sup>2</sup>: Գրիգոր Տաթևացին դատավորին համեմատում է մարդու մտքի հետ, իսկ ոսոխներին՝ մարմնավոր ցանկություններին:

<sup>1</sup> Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմերան հատոր, Երուսաղեմ, 1993:

<sup>2</sup> Աստուածաշունչ Մատենա Հին և Նոր Կտակարանների, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994: Բոլոր մեքերումները կատարված են այս հրատարակությունից:



նրանց գործերը և բնավ վկայի կարիք չունի և արդարապես է դատում, ինչպես Հովհաննեսն առաքյալն է ասում. «Սիրելիներ, եթե մեր սրտերը մեզ չդատապարտեն, համարձակություն կունենանք Աստծո առաջ» (Ա. Հովհ. Գ 21):

Մտքից չենք կարող երբեք մեր մեղքերը թաքցնել, այն ամեն պահ մեզ հետ է՝ ուսուցանելու և խրատելու մեզ: Ծածուկ և անտեսանելի տեղերում է բնակվում, և ոչ ոք նրան չի տեսնում, դրա համար էլ մարդկանցից չի ամաչում, և որովհետև միտքն իր իսկ իշխանությամբ ծառայ է, այլ ազատ, դրա համար էլ Հիսուսի բնորոշմամբ այն Աստծուց չի վախենում:

Աստված մարդուն արարելիս նրան անձնիշխանություն է պարգևել, որպեսզի մարդն իր ազատ կամքով ընտրի բարին, ինչպես հրեշտակներն ու բոլոր սրբերը, որ իրենց կամքով թողնելով չարը և բարուն հետևելով՝ հասնում են Երկնային Արքայության: Սակայն, ինչպես հայտնի է, շատ հաճախ մարդիկ իրենց հոժար կամքով ընտրում են չարը, որով էլ մնանվում և գործակից են դառնում սատանային: Այս պարագան ինքնին պարտադրում է մարդուն, որ վերջինս երբեք չփորձի Աստծուն մեղադրել, քանզի Տերն անձնիշխանություն է տվել մարդուն միմիայն բարիք գործելու համար, սակայն մարդը բազմիցս փորձում է այն գործադրել չար նպատակների համար:

Ահա այսպես արդար և ինքնիշխան դատավորը՝ միտքը, երբ իր կարգի մեջ է լինում, մշտապես սուրբ գործեր է կատարում՝ ընտրելով բարին և միշտ խորհելով աստվածային առաքինությունների և երկնայինի մասին, ուր Քրիստոս, համաձայն առաքյալի խոսքի՝ նստած է Աստծո աջ կողմում: Այս տեսակ միտքն իր հետ հոգին էլ է առ Աստված բարձրացնում: Մարդու շունչը երբ կապվում է հոգու հետ, արյունը՝ շնչի հետ, մարմինն ու զգայարաններն էլ՝ վերջիններիս հետ, մարդը մարմնով, հոգով ու մտքով դառնում է ամբողջությամբ երկնային և մնա՞նք Աստծուն՝ միշտ բարին խորհելով ու գործելով: Իսկ երբ միտքը դատարկվում է բարի բոլոր խորհուրդներից, այն ժամանակ վերևում հիշատակված կարգը փոխվում է. միտքը, որ նախկինում առաջնորդի դեր էր տանում, հայտնվում է ամենից վերջին տեղում, և մարդու զգայությունը, մարմնական ցանկությունների հետ խառնվելով, իր հետ քարշ է տալիս ողջ մարմինը: Եվ երբ վերջինիս հետևում է արյունը, սրան՝ շունչը, որին կապված էր, շնչին՝ հոգին, իսկ հոգուն էլ՝ միտքը, մարդը մարմնով, հոգով ու մտքով ամբողջությամբ դառնում է երկրավոր ու ախտերով լեցուն:

Ինքնիշխան միտքը երբ գերի է դառնում զգայություններին, այն ժամանակ նա ծառայ է դառնում ամեն տեսակ ցանկությունների՝ միշտ մտածելով մարմնականի մասին, ինչպես Տերն է ասում. «Որ առնե՞ գմեղս, ծառայ է մեղացն»: Եվ հենց այս ժամանակ էլ ոտխը՝ մարմինը, մտքից առավել գորանալով, հարձակվում է հոգու վրա և կեղեքում ու չարչարում՝ իր կամքով զրկելով նրան շատ ու շատ բարիքներից, և փոխարենն ինքը փարթամանում և հարստանում:

Այս ամենի արդյունքում մարդը կորստյան է մատնում այն մեծ հարստությունը, որ Աստված էր պարգևել իրեն արարչագործության ժամանակ. մարդու հոգին այրիանում է Երկնավոր Փեսայից՝ Քրիստոսից, Ուն սիրով և Աստծու կամքը կատարելով հարսնացել

էր, և երբ հոգին արհամարհելով ատում է Աստծո օրենքը, այլևս բաժանվում է իր Գլխից՝ Տիրոջից, և դառնում այրի:

Քրիստոսավանդ առական տեսնում ենք սակայն, որ այրին բազմիցս գալիս է դատավորի մոտ և այս կերպ դիմում նրան. «Իմ ոսոխի դեմ իմ դատը տես» (Ղուկ. ԺԸ 3), այսինքն՝ հոգին գալիս է դատավոր մտքի մոտ և թախամեծանքով խնդրում, որպեսզի վերջինս լսի իր խոսքը և դատ անի ոսոխ մարմնի նկատմամբ, որ անհրաժեշտ է և զրկում է նրան բարիքներից ու հեռացնում Աստծո կամքից:

Դատավորը, սակայն, երկար ժամանակ չէր ցանկանում այրիի դատը տեսնել, որովհետև նույն ինքն՝ դատավոր միտքը, մարմնական հաճույքներից թմրած մեջ էր և չէր էլ կամենում զգաստանալ: Եվ քանի որ Արարիչ Աստված մարդու մեջ խիղճ է դրել՝ վերջինս անաչառ և անդուլ ձևով կշտամբելու, մշտապես անհանգստացնելու իր զանազան սխալների համար, ապա մարդը, իր իսկ գործած մեղքերի հիշողություններից զօրուգիշեր տանջվելով, խղճի խայթոցներից ազատվելու համար օրերից մի օր որոշում է տեսնել հոգու դատը:

Ինչպես տեսնում ենք, միտքը, որ այնքան էր մարմնի հետ մեղքեր գործել, սկզբում չի կամենում լսել հոգուն և նրա արդար դատը տեսնել: Ահա սա է պատճառը, որ միտքն անհրաժեշտ դատավոր է կոչվում: Այնուհետև երբ միտքն ուշքի է գալիս, սկսում է խորհել հետևյալը. «Թեև Աստծուց չեմ վախենում և մարդկանցից չեմ ամաչում, բայց այն բանի համար, որ այրի կինն ինձ հոգնեցնում է, նրա դատը պիտի տեսնեմ, որպեսզի անընդհատ չգա և ինձ չանհանգստացնի» (Ղուկ. ԺԸ 4-5):

Այսինքն՝ այս պահին խղճմտանքն է, որ առաջ է գալիս՝ դատելու միտքը, երբ վերջինս փորձում է անհրաժեշտություն գործել, ինչն էլ ստիպում է, որպեսզի միտքը զղջա, սթափվի իր կատարած անհրաժեշտության համար և արդար դատաստան տեսնի: Միտքն այլ կերպ չի կարող իր հանցանքների համար խղճմտանքից ազատվել և հանգիստ գտնել, եթե ոչ՝ ապաշխարությամբ և զղջումով: Անհրաժեշտ դատավորը երբ զղջում և ապաշխարում է իր գործած անհրաժեշտությունների համար, այլևս չի կարող անհրաժեշտ կոչվել, նա արդեն իսկ բարիք գործող և արդար դատավոր է:

Առակի ավարտին Քրիստոս դիմում է աշակերտներին և բոլոր այնտեղ հավաքվածներին՝ ասելով. «Իսկ Աստված արդարություն չի՞ անի իր այն ծառաներին, որոնք գիշեր-ցերեկ աղաղակում են» (Ղուկ. ԺԸ 7): Այստեղ Տաթևացին, անդրադառնալով Տերունական այս վերջին խոսքերին, հիմնական շեշտը դնում է հենց այդ մտքի վրա՝ ցանկանալով բոլորի ուշադրությունը հրավիրել հետևյալ հարցադրման վրա. ովքե՞ր են նրանք, որ աղաղակում են առ Աստված, և Տերը դուրս է գալիս նրանց փոխարեն վրեժխնդիր լինելու: Առաջին հերթին, ըստ եռամեծ վարդապետի, մարդու բարի գործերն են, իսկ հետո՝ պահապան հրեշտակները, որ իրենց ձայնն են բարձրացնում առ Աստված՝ բողոքելով մարդկանց բազմաթիվ չարիքների համար, ինչպես նաև բոլոր այն զրկվածներն ու աղքատները, ովքեր աղաղակում են առ Աստված՝ մարդկանց կողմից իրենց կրած բազմաթիվ զրկանքներ

րի պատճառով, ինչպես Հակոբոս առաքյալն է ասում. «Ձեր կողմից զրկվածն աղաղակում է, և հնձվորների բողոքը հասավ Ամենակալ Տիրոջ ականջին» (Հակոբոս Ե 4):

Վերևում թվարկված բոլոր վկաներն էլ կա՛մ այստեղ, կա՛մ հանդերձյալ կյանքում հայտնվելու և Ահեղ Դատավորի Երկրորդ գալստյանը՝ Ահեղ դատաստանի ժամանակ, վեր են հանելու բոլոր մեղավորների հանցանքները:

Առական Տաթևացին ընդգծում է երկու շատ կարևոր հանգամանք՝ երկյուղ Աստծո հանդեպ և ամոթ մարդու նկատմամբ, քանզի սրանք արդեն իսկ մեծ սանձ են յուրաքանչ-յուր մարդու համար, սանձ, որ ցանկացած մեկին սթափեցնում և սանձում է մեղք գործելու մտքից: Իսկ այնտեղ, ուր տեղ չունեն Աստծո հանդեպ երկյուղը և մարդու նկատմամբ ամոթը, մարդը, ինչպես անսանձ ձիւն, ճանապարհից շեղվելով գնում և խորխորատը՝ չարի որոգայթն է ընկնում, որովհետև հանդուգն ու անամոթ մարդը բոլոր չարիքներն ընդունող մի շտեմարան է:

Տաթևացին առանձնահատուկ նշում և պատգամում է, որ Քրիստոս Աստված այս առական սովորեցնում է անձանձրույթ աղոթել առ Աստված: Քանզի եթե անիրավ դատավորը, որ ո՛չ Աստծուց էր վախենում և ո՛չ էլ մարդկանցից ամաչում, այրու տևապես դիմելու և թախանձելու համար նրա դատը տեսավ, որչափ ևս առավել Հիսուս Քրիստոս՝ Արդար Դատավորը, Ով անդադար լսում է մարդկանց աղաչանքներն ու պաղատանքները, կլսի և բոլոր նրանց, ովքեր ամենայն ժամ իրենց աղաչանքը, խնդրանքը և աղոթքը կբարձրացնեն առ Ամենասուրբ Երրորդություն: